ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 հուլիսի 2019 թվականի N 94- Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԽԱՇԹԱՌԱԿ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ, ԽԱՇԹԱՌԱԿ ԵՎ ՍԱՐԻԳՅՈՒՂ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՀԵՐԹԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության 2016 թվականի մայիսի 25-ի Ընտրական օրենսգրքի 120-րդ հոդվածի 2-րդ մասով, և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի 17 հուլիսի 2018 թվականի «2019 թվականի տեղական ինքնակառավարման մարմինների հերթական ընտրությունների քվեարկության օրեր սահմանելու մասին» թիվ 26-Ա որոշումը՝

ո ր ո շ ո ւ մ ե մ.

1. Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Խաշթառակ համայնքում համայնքի ղեկավարի, Խաշթառակ և Սարիգյուղ համայնքներում ավագանու անդամների հերթական ընտրությունները նշանակել 2019թ. սեպտեմբերի 29-ին:
2. Առաջարկել վերը նշված համայնքների ղեկավարներին.
   Օրենքով սահմանված կարգով ապահովել ընտրության նախապատրաստման և անցկացման գործընթացը:
3. Տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետի տեղակալին.
   Ընտրությունների նախապատրաստման և անցկացման ժամանակահատվածում համագործակցել թիվ 37 և 38 ընտրատարածքային ընտրական և տեղամասային ընտրական հանձնաժողովների հետ:

Հ. ՉՈԲԱՆՅԱՆ

16 հուլիսի 2019թ.
ք. Իջևան